ՍՈՒՍԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԱՆԻ ԴԻԼԱՆՅԱՆ

ՀԱՏՈՒԿ ՍԱՐՔԵՐԻ, ՄԱՐԶԱՍԱՐՔԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հայտնի է, որ տարածության և ժամանակի կողմնորոշման առանձնահատկությունները ձևավորվում են դեռ վաղ մանկական հասակից: Այդ իսկ պատճառով էլ երեխաների զարգացման գործընթացում այդ առանձնահատկությունները կարևոր դեր և նշանակություն ունեն: Այս խնդիրը նկատելիորեն բարդանում է, երբ այս չափանիշների ձևավորման հարցը վերաբերում է խորը և մասնակի տեսողության խանգարումներ ունեցող երեխաներին:

Այս երեխաների ժամանակի և տարածության մեջ կողմնորոշումը ուղեկցվում է որոշակի դժվարություններով, որի արդյունքում չտեսնող և թույլ տեսնող երեխաների ժամանակի և տարածության մեջ կողմնորոշվելու կարողության զարգացմանն ուղղված կիրառվող միջոցների, մեթոդների և պայմանների մշակմանը մասնագիտական գրականության մեջ և գործնականում շատ կարևոր տեղ են հատկացնում: [1, 24-25]

Չտեսնող և թույլ տեսնող երեխաների տարածական կողմնորոշման կարողության հետազոտության խնդրին նվիրված են շատ հետազոտություններ (В.С. Сверлов, 1951; Л.Ф. Касаткин, 1980; Л.А. Семенов, 1979; Л.И. Солнцева, 1980; Р.Н. Азарян, 1990; Т.И. Нагаева, 2010; Т.А. Подугольникова, 2011): Այս խնդիրն այսօր էլ արդիական է, սակայն նրա լուծման համար բոլոր միջոցները չեն օգտագործվում: [2, 73-79; 3, 55-58;]

Մենք կարծում ենք, որ չտեսնող և թույլ տեսնող կրտսեր դպրոցականների ժամանակի և տարածական կողմնորոշման զարգացման արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ մարզասարքերի և հատուկ միջոցների օգնությամբ խաղային գործողությունների կատարումը:

Ներկայումս, չտեսնող և թույլ տեսնող դպրոցականների հետ իրականացվող մանկավարժական աշխատանքում լայն կիրառություն ունեն տեխնիկական միջոցները, մարզասարքերը և հատուկ սարքավորումները: Տեսողության խանգարումներ ունեցող

երեխաների հատուկ, ինչպես նաև հանրակրթական դպրոցում դրանց կիրառումը մեթոդական և կազմակերպչական բնույթի շատ խնդիրներ է լուծում և բազմակողմանի զարգացումն ապահովող հավելյալ միջոց է հանդիսանում:

Շատ հեղինակների (И.С. Тиновский, Л.А. Семенов, 1966; В.С. Николаев, 1982; З.В. Саркисян, 2003; У. Кислинг, 2010) հետազոտություններն ապացուցում են, որ չտեսնող և թույլ տեսնող դպրոցականների դաստիարակության գործում մարզասարքերի և հատուկ միջոցների կիրառումը դրական ազդեցություն ունի նրանց շարժողական գործառույթների զարգացման վրա և հնարավորություն է տալիս իրականացնել անհատական մոտեցում, ընտրողաբար ազդել օրգանիզմի շարժողական և վեգետատիվ գործառույթների վրա:[4, 43-45; 5, 12-14]

Այս սարքավորումների համապարփակությունն ու մատչելիությունը ենթադրում է տարբեր վարժությունների կատարման մեթոդների լայն ընտրություն, այդ թվում նաև՝ խաղային վարժությունների և առաջադրանքների լայնածավալ կիրառում: Տարբեր խաղային առաջադրանքների կատարումը բարելավում է չտեսնող և թույլ տեսնող երեխաների հուզակամային ոլորտը, ակտիվացնում՝ նրանց շարժողական գործունեությունը:

Անցկացված հետազոտությունը թույլ է տալիս հաստատել խորը և մասնակի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների տարածական կողմնորոշման զարգացման նպատակով կիրառվող խաղային մեթոդների արդյունավետությունը՝ թիավարող մարզասարքի և հատուկ հարմարանքի՝ «փորձարարական ուղեգորգի» օգնությամբ իրականացվող առաջադրանքների և վարժությունների կատարման ժամանակ: Մանկավարժական գիտափորձին մասնակցել են առաջինից երրորդ դասարանների 29 չտեսնող և թույլ տեսնող երեխաներ՝ 15-ը՝ փորձարարական և 14-ը՝ ստուգողական խմբերում:

Ըստ տարիքի և սեռային պատկանելության, տեսողության խանգարման աստիճանի և տարածական կողմնորոշման կարողությունների 2 հետազոտական խմբերի փորձարկվողները գրեթե միակազմ էին նաև ժամանակի և տարածության մեջ կողմնորոշվելու գործնական կարողությունների և հմտությունների մակարդակին համապատասխան:

Ուսուցանող մանավարժական գիտափորձի առաջին փուլում երկու հետազոտական խմբերի փորձարկվողները առաջադրանքներն ու վարժությունները կատարել են «Նավակ»

թիավարման մարզասարքի վրա: Փորձարարական խմբում գործունեության տարբեր ձևերի ժամանակ կարևոր տեղ է հատկացվել՝ «ժամանակ», «ժամանակի հատվածներ», «տևողություն» և «ընթացք» հասկացությունների ծանոթացմանը: Ստացված պատկերացումներն ամրապնդվել են անցկացված հատուկ պարապմունքների ժամանակ, ինչպիսիք են՝ «Լուցկու հատիկները տուփի մեջ դիր որոշակի ժամանակահատվածում», «Որոշիր, թե որքան ժամանակում ես ներկել նկարը», «Գուշակիր Ժամանակը» և այլն: «Ճանապարհորդություն գետի վրայով» սյուժետային խաղ մարզասարքի վրա անցկացված բոլոր առաջադրանքներն ու վարժությունները, իրենց մեջ ներառել են նաև մի քանի հատուկ առաջադրանքներ՝ «տեղաշարժ հանգիստ գետի վրայով», «գետի հոսքին հակառակ», այլ նավակների հետ մրցություն և այլն: Ստուգողական խմբի փորձարկվողները այս առաջադրանքը մարզասարքի վրա կատարում էին համընդհանուր մեթոդիկայով՝ բացատրություն, ցուցադրում, փորձնական մոտեցումներ և այլն: Պարապմունքների անցկացման խաղային ձև այս դեպքում չի կիրառվել:

Հետազոտական երկու խմբի երեխաներն իրավունք ունեին ինքնուրույն դադարեցնելու առաջադրանքի կատարումը, եթե հոգնել էին, կամ չէին ցանկանում կատարել առաջադրանքը՝ տարբեր պատճառներով:

Քանի որ չտեսնող և թույլ տեսնող կրտսեր դպրոցականները դժվարանում են ինքնուրույն ընկալել շրջակա իրական աշխարհը, մանկավարժական գիտափորձում կիրառել ենք հետևյալ մեթոդական հնարները, որոնք թույլ են տալիս այս երեխաներին հասնել դրական արդյունքների ժամանակի և տարածության մեջ կողմնորոշվելու կարողության զարգացման ժամանակ.

- տեսողական, զգայական և լսողական ծանոթացում ժամանակի չափման սարքավորումների հետ (տարբեր ժամացույցներ, ավազային ժամացույցներ, վայրկենաչափ, ձայնային կողմնորոշիչներ, ձայնային փարոս և այլն),
- ժամանակի միավորի երկարության բացատրում և ծանոթացում՝ րոպեի, րոպեների ինտերվալների, և ժամանակային այլ հասկացությունների հետ,
- որոշակի ժամանակահատածում՝ 3րոպե, 5րոպե, 10րոպե, կատարվող տարբեր տեսակի առաջադրանքներ,
- որևէ առաջադրանքի կատարման ժամանակի ինքնուրույն որոշում:

Գիտափորձի սկզբնական փուլում չտեսնող և թույլ տեսնող երեխաներին ծանոթացրել ենք ժամանակի չափման սարքավորումներին, դրանց նշանակությանը, աշխատելու սկզբունքին, դրանցից օգտվելու կարողությանը: Կարևոր տեղ է հատկացվել ժամանակի հասկացության, նրա իտերվալների, երկարության հետ ծանոթացմանը, տարբեր տեսակի գործունեության ձևերի մեջ ժամանակի ընթացքը որշելուն:

Մեր կողմից կատարված դիտումները, ուսուցիչների և դաստիարակների փաստարկներն ապացուցում են, որ տեսողության խանգարում ունեցող երեխաները գործունեության տարբեր տեսակների պարապմունքների ժամանակ չեն կարողանում ճիշտ կողմնորոշվել ժամանակի և տարածության մեջ, վերահսկել ժամանակի ընթացքը:

Այսպիսով, փորձարարական և ստուգողական խմբի փորձարկվողները, նախքան գիտափորձի անցկացումը, ժամանակի գնահատման համեմատաբար ցածր մակարդակ ունեին թիավարման մարզասարքի վրա առաջադրանքներ կատարելիս: Թիավարման մարզասարքի վրա հանձնարարված ժամանակում (8 րոպե) ձեռքերով թեթև շարժումներ կատարելով և դրանից հետո՝ 10 րոպե հանգստանալով, հետազոտվող խմբերի բոլոր սովորողները սխալ էին որոշում ծախսված ժամանակը, ընդ որում, սխալը միջինում կազմում էր իրական ժամանակի 49,8% (աղյուսակ 1):

Այսպիսով, թիավարման մարզասարքի վրա վարժություն կատարելու համար հատկացված իրական ժամանակը կազմում էր 8 րոպե, իսկ չտեսնող և թույլ տեսնող երեխաների ցուցաբերած ցուցանիշները միջինում՝ 3 րոպե 52վրկ., սխալը միջինում կազմում էր 4,07 րոպե (51,6%): Մոտավորապես նման պատկեր էր դիտվում փորձարկվողների հանգստի ժամանակի գնահատման դեպքում՝ շարժողական առաջադրանքի կատարումից անմիջապես հետո: Անցկացված հանգստի ժամանակի որոշման սխալը միջինում կազմում էր 4 րոպե 50վրկ. (48,3%):

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ սյուժետային խաղում մարզասարքի վրա կատարվող առաջադրանքն ավելի դրական ազդեցություն ունի տեսողության խանգարում ունեցող երեխաների ժամանակի մեջ կողմնորոշվելու զարգացման վրա, քան ավանդական մեթոդների կիրառումը՝ բացատրում, ցուցադրում, փորձարկում և այլն:

Աղյուսակ 1

Փորձարկվողների ժամանակի մեջ կողմնորոշվելու կարողության ցուցանիշները գործունեության տարբեր տեսակների դեպքում

Աշխատանքի ձևերը	Ժամանակը	Փորձարկվող խմբեր							
		Փորձարարական n=15				Ստուգողական n=14			
		Մինչ գիտափորձը		Գիտափորձից հետո		Մինչ գիտափորձը		Գիտափորձից հետո	
		բաց. /բ/	%	բաց. /բ/	%	բաց. /բ/	%	բաց. /բ/	%
Շարժողական գործունեություն	Իրական	8	100	8	100	8	100	8	100
	Փորձարկվողների կողմից գնահատված	3.50	47.9	6.35	82.3	3.55	48.9	4	50.0
	Տարբերությունը	4.10	52.1	1.25	17.7	4.05	51.1	4	50.0
Հանգստի ժամանակ	Իրական	10	100	10	100	10	100	10	100
	Փորձարկվողների կողմից գնահատված	5.10	51.7	8.40	86.7	5.10	51.7	5.30	55.0
	Տարբերությունը	4.50	48.3	1.20	13.3	4.50	48.3	4.30	45.0
Միջին ցուցանիշ	Իրական	9	100	9	100	9	100	9	100
	Փորձարկվողների կողմից գնահատված	4.30	49.9	7.37	84.5	4.32	50.3	5.05	52.5
	Տարբերությունը	4.30	49.9	1.23	15.5	4.28	49.7	3.55	47.5

Գիտափորձի անցկացման արդյունքում այս ցուցանիշները զգալիորեն բարելավված էին հատկապես փորձարարական խմբում:

Գիտափորձի վերջում փորձարարական խմբի տեսողության խանգարումներ ունեցող երեխաները համեմատաբար ճիշտ են որոշել թիավարման մարզասարքի վրա իրենց հանգստի անցկացման ժամանակը: Այս խմբում սխալը կազմել է միջնում՝ 17.7% և 13.3%, համապատասխանաբար, 34.4% և 35.0% պակաս, քան՝ մինչև գիտափորձը: Ստուգողական խմբում այս փոփոխությունները քիչ էին արտահայտված: Համեմատած մինչփորձարարական արդյունքների հետ, ծախսած ժամանակի որոշումը կրճատվել էր ընդամենը 1.1% (թիավարման մարզասարքի վրա ձեռքերով շարժումներ կատարելու ժամանակ) և 3.3% հանգստի ժամանակի որոշման դեպքում:

Պետք է նշել, որ հետազոտվող երկու խմբերի բացարձակ չտեսնող և մնացորդային տեսողությամբ չտեսնող երեխաներն, ի տարբերություն թույլ տեսնող իրենց հասակակիցների՝ ուսուցանող մանկավարժական գիտափորձի վերջում, առաջադրանքներ կատարելով «Նավակ» թիավարման մարզասարքի վրա, ցույց տվեցին ժամանակի մեջ կողմնորոշվելու լավագույն արդյունքներ: Տեսողության խորը խանգարումներ ունեցող երեխաները սյուժետային խաղում առաջադրանք կատարելու արդյունքում համեմատաբար ավելի լավ են կողմնորոշվել, քան թույլ տեսնող երեխաները:

Այսպիսով, պարզվում է, որ կուրությունն ու աննշան մնացորդային տեսողությունը ստիպում են այս երեխաներին լինել առավել ուշադիր, կենտրոնացած և ամբողջ շրջապատող ինֆորմացիան ընկալել առավել մանրակրկիտ, քան այդ անում են թույլ տեսնող փորձարկվողները, որոնք ինչ-որ չափով հիմնվում են իրենց ունեցած տեսողության վրա:

Գրականություն

1. Руководство для педагогов и родителей по практическому обучению слепоглухих и слепых детей с дополнительными нарушениями навыкам ориентировки и мобильности. – Сергиев Посад, 2009.
2. Подугольникова Т.А. с соафт. Обучение школьников с нарушением бинокулярного зрения ориентировке в микропространстве //Дефектология. –М., 2011-N1. С. 73-79.
3. Нагаева Т.И. Нарушение зрения у дошкольников: Развитие пространственной ориентировки.- Ростов-на-Дону.-2010.- 92с.
4. Кислинг У. Сенсорная интеграция в диалоге: понять ребенка, распознать проблему, помочь обрести равновесие /Под. ред. Е.В. Ключковой.- М.: Теревинф, 2010.
5. Саркисян З.В. Подвижные игры и упражнения для детей с нарушением зрения.-/Метод. Реком./, 2003,- 16с

РЕЗЮМЕ

ИССЛЕДОВАНИЕ ЭФФЕКТИВНОСТИ ВЫПОЛНЕНИЯ ИГРОВЫХ ДЕЙСТВИЙ НА ТРЕНАЖЕРАХ И СПЕЦИАЛЬНЫХ ПРИСПОСОБЛЕНИЯХ ДЛЯ РАЗВИТИЯ ОРИЕНТИРОВКИ ВО ВРЕМЕНИ И В ПРОСТРАНСТВЕ У ДЕТЕЙ С НАРУШЕНИЯМИ ЗРЕНИЯ

СУСАННА МУРАДЯН

АНИ ДИЛАНЯН

В статье на основе анализа результатов экспериментальных исследований показана эффективность выполнения игровых действий на тренажерах и специальных приспособлениях на развитие ориентировки во времени и в пространстве у детей с нарушениями зрения.

SUMMARY

A RESEARCH OF THE EFFECTIVENESS OF IMPLEMENTATION OF GAME ACTIONS ON TRAINER AND SPECIALLY ADAPTED FACILITIES FOR DEVELOPMENT OF TIME AND SPACE ORIENTATION OF CHILDREN WITH VISUAL IMPAIRMENTS

SUSANNA MURADYAN

ANI DILANYAN

In the article the effectiveness of implementation of game actions on trainer and specially adapted facilities for development of time and space orientation of children with visual impairments is presented based on analysis of results of experimental research.